


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԱՐ

Նամակ կամ ուր եւ քրոքիւն
պէտք է ուղղել առ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԵՍԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՇԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ե Մ Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզիպոսի համար տեղի. ողջ դ. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ քրոքիւն եւ չի տրուիր :

ՀՆԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Փարոսի նեղ սահմանը չի ներեր ուր մեղի
հետ անմիջական կերպով կամ անուղղակի ա-
ռնութիւն ունեցող հարցերն ու լուրերը մէկ
կողմ թողնելով, լայն տեղ մը տալու համար
Հնդկաստանի վերաբերեալ մանր մունր լու-
րերուն, հակասական հեռագիրներուն, որոնց
արժանաւոր ճշգրտութիւնը չէ. դորձակալութիւն-
ներ կան որոնք կը չափազանցեն ապստամբ-
ներուն երբեմնակի յաղթանակները, ու թեր-
թեր՝ որոնք Անգլիոյ գերիշխանութիւնը Հնդկ-
կաստանի վրայէն վերցուելու մօտ կը հռչա-
կեն. համալսման հարգումը ահաւոր դոյ-
ներով կը նկարագրուի ու իրեն միակ շարժա-
ռիւթը ցոյց կը տրուի այդ ապստամբութեան
եզիպոսի հասած հեռագիրներն ալ ընդհան-
րապէս այդ օգիտ խմբագրութեան են :

Լաւագոյն և աւելի գործնական կը սե-
պենք՝ անոնց մեքենական արձապահութիւնը
նախ անոնց, եւրոպական լուր՝ ու անկողմնա-
կալ թերթերու հետեւողութեամբ քանի մը
առող նուիրել Հնդկաստանի շարժումի արդի
վիճակին: Կերեւայ թէ, Անգլիոյ լաւատեսիկ
շրջանակներուն մէջ մանաւանդ, շատ կարե-
ւորութիւն չեն ընծայեր Հնդկաստանի հիւսի-
սային-արեւմտեան սահմանագիծի ցեղերուն
ապստամբութեան, և այդ նահանգներուն
մէջ համախմբուած զինուորական զօրութիւնը
բաւական կը նկատեն ու իրեն կանոնաւ զայն
զսպելու: Այդ ցեղերը գլուխ վերցունելու
միտը շարժառիւթը ո՛չ կրօնական միջնորդու-
թիւնն է ո՛չ ալ հայրենասիրական անկախու-
թեան գաղափարը. պարզապէս աւարառու-
թեան ու կողոպտի տենչը. և որովհետեւ
իրարու դէմ անընդհատ պատերազմի մէջ են,
զինագողարի վայրկեանէ մը օգուտ քաղած
են յարձակելու համար անգլիական կայան-
ներուն վրայ ուր գիտէին թէ քիչ թուով զօրք
կար: Բայց այս կերպով իրենց ձեռք բերած
առաւելութիւնը երկարատեւ չի կրնար ըլլալ
ու դիպուածական բան մըն է միայն :

Հակաանգլիական աղբիւրները մինչեւ իսկ
կասկած կը յայտնեն բնիկ զօրքերու հաւա-
տարմութեան վրայ որոնք, կրնան, պատերազ-
մի դաշտին վրայ կրնան իրենց անգլիական-
յին արեւակիցներուն կողմն անցնիլ. այս են-
թադրութիւն ուրիշ բան չապացուցաներ բայց
թէ, եւրոպայի մէկ մասին մէջ, կամովին կամ

առկամայ, կանգնողանան Հնդկաստանի իրաց
բուն վիճակին: Ապստամբութիւնը զսպելու
կոչուած զօրքերը մեծ մասամբ կը բաղկանան
այն հնդկիներէն որոնց մտքէն ո՛չ միայն շանց-
ներ ձեռք կարկառել Անգլիոյ տիրութեան, այլ և
կուզեն ընտելի ընել զանոնք՝ իրեն իրենց
ժառանգական ու անհաշտ թշնամիները, և
դէթ մինչեւ այս վայրկեանս, — վասն զի ա-
նակնկալներու դարավերջի մը մէջ կ'ապրինք, —
հաւատարիմ կը մնան բրիտանական դրօշին :

Գալով Անգլիոյ տիրութեան էմիրին մասնակ-
ցութեան և իսլամական կեդրոններէ տրուած
միջամիտ, ատենց ալ մեծ հաւատք և կարե-
ւորութիւն չընծայուի. մինչեւ իսկ հնդկա-
կան դորձերուն գիտակից անձերու քով կար-
ծիք մը կը տիրէ, թէ եւ քիչ մը եղական
բայց ո՛չ անհեթեթ, թէ սահմանագիծի այդ-
մասին վրայ, անգլիական Հնդկաստանի ու
Անգլիոյ տիրութեան միջեւ, պզտիկ ապստամբու-
թիւն մը աննպաստ չէ բրիտանական շահե-
րուն: Այդ կողմերու թափառաշրջիկ ցեղերը,
որոնց գլխաւոր, միակ զբաղումը պատերազմն
է, սովորական ատեններ սահմանագիծի կը
պաշտպանեն արտաքին թշնամիին դէմ. բայց
երբ փորձեն զիրենք պահող կառավարութեան
դէմ դառնալ, այնպիսի խիստ դաս մը կ'ըն-
դունին որ երկար ատենի համար կը զօրէ-
լսելքներին զլուսնին բերելու :

Ճշմարիտ է թէ ապստամբութիւնը քիչ
մը զօրաւոր եղաւ այս անգամ, և անձի կո-
րուստ ու մեծագումար ծախս պատճառեց ու
կը պատճառէ Անգլիոյ, բայց իր սահմանե-
րէն դուրս չի կրնար ելլել. ընդարձակածա-
ւալ Հնդկաստանը, իր ամբողջութեան մէջ,
հանգարտ կը մնայ, և անոնք որ հականգ-
լիական ծայրայեղ զգացումներէ մղուած՝ կե-
րեւակայեն ու հաւատացունել կուզեն թէ 1857ի
ընդհանուր շարժումին նախաքայլն է, յու-
սախաբ պիտի ըլլան, եթէ արդէն չեն եղած :

ԱՆԳԼԻԱՅԻՆԵՐԸ

Ժամանակակից հայ գրականութեան մէջ
իր յատուկ տեղն ունեցող համակրելի գրա-
դէտի մը կողմէ իր եզրկատարնակ մէկ բարե-
կամին ուղղութեամբ հետեւեալ նամակը տարա-
կոյս չունինք որ մեծ հաճոյքով պիտի կար-
դացուի ոչ միայն իրեն նրբամիտ ուրուագիծ

մը անգլիական բարքերու վրայ, այլ և իրեն
գրական գեղեցիկ հաստատած մը :

Առիթն է յայտնելու մեր ընթերցողներուն
թէ կը յուսանք հետզհետէ Փարոսին ապա-
հովել ծանօթ հրապարակագիրներու և գրա-
դէտներու աշխատակցութիւնը :

ԼՈՆՏՈՆ, 14 Սեպտեմբեր

Սիրելի բարեկամ,

Կուգե՞ս առանց տեղի գրեթէ, առանց
Քրիստոսի կամ Օնթարիոյ երթալու՝ ուր Auri-
sacra famesը այս միջոցիս կը բաշէ աշխարհիս էն
շարքով բողբոջողները՝ նորագիտ ակեհանքե-
րուն չուրջը, կուգե՞ս, երես մը բուն գրեթէ, տաք
հազար ոսկի փոստիկ, անգլիական :

Եթէ ինքզինիդ համար չես ուզեր, եթէ, ճիշդ
ապարդիւնութեանը համոզուելէ ետքը՝ վայելքին
ալ ունայնամտութեանը համոզուեցար, եթէ անգամ
ու մշտնջենաւոր Բուրգերուն շուրջն ապա՝ որոնք
մարդկութիւններու ծնիլը ու անհետանալը տեսան՝
հաստատուեցար այն ըմբռնութիւն մէջ իմ, կեանքին
դէպի մահը կարճատեւ անցըր շարժել իտեղիս
ոգորումներով ու անկողորդայն գոհացումներով, —
մտած՝ դո՛նէ բարեկամներուդ որոնք այս Ունայնու-
թեանը յարելու ունայնամտութիւնը ունին, ու Ոսկի
Հորթին յիմար երկրպագուներ՝ ոսկին բողբոջող կը
տողարին :

Բա՛, մանուսնդ, այնքան զիւրիս պիտի ըլլայ
ճիշդ :

Բացատրեմ՝ դորձը :

Անցեալ տարու, անեկիս մէջ նստած, շատ
մը բաներու հետ կը խորհէի այն երջանկութեանը
վրայ զոր պիտի ունենայի Լոնտոնի այս աշատ
երկիրը փոխելով հաղաւի խնդուն կապաւորու-
նեան հետ ու անհաճոյ բաներ կը մրթմրէի այս բազ-
դին դէմ՝ որ զիս նետած էր այս հիւստիքի ափուն-
քը, որուն փողոքը չէ որ կը կապէ զիս, երբ որ
յանկարծ փ...ը ոտքի մը ախի ներս խոյսցու-
նեալ բռնած թուղթ մը ճոճելով յաղթական և
ուրախութեան թրթռուն ձայնով մը գոչելով.

— Գտա՛նք, բարեկամ, գտա՛նք :

Այս արքիւթիկեան թեթեւ իմ շարտիքեալ
բացողանջութեան շնորհով՝ բացատրութիւն մը ու-
ղեւ վրայ էի, ան շարունակեց՝ իր խանդավա-
ռութեանը մէջ կորսուած, ձեռք բռնած թղթին
վրայ զարկելով.

— Ահա՛ կ'ըլլանք, ահա՛ Պակտոնը, ահա՛ Է-
տորտոն : Ահա՛ ուղղիմիտներուն երազած ու չի
գտած փխտովայական բարը :

Տպագրութեամբ թուղթ մըն էր ու իրաւ, խոշոր
տաւերով վերնագրութեամբ էր :

Տաք հազար ոսկի

Տենդուտ անհամբերութեամբ մը աչքէ անցուցի
գրութեանը : Բարբաբական գրատուն մը տաք հազար
ոսկի փարձատրութիւն կը խոստանար այն կաթիլի-
կին որ իր շարած տաք հարցումներուն պատասխանը
տար Աստուածաշունչին (1) :

(1) Ծ. Խ. — Աւելորդ կը սեպեմք առաջ բերել
այդ ինքնասիւս հարցաւանը զոր մեր աշխատակից
«Ժիրար» յիշած էր արդէն իր շաբաթ օրուան յոդ-
ուածին մէջ :

Երեզ հագուած կին մը փողոցին մէջ մեր սար-
սափահար բարեկամին մօտեցած էր յանկարծ, անոր
ձեռքը թխած էր՝ գրեթէ բռնի՝ այս թուղթը, ու
անցյալստացած :

Փ . . ք չէ ըմբռնած , ես ալ չկրցայ հասկնալ,
դուն ալ չսկսիր կրնաս բացատրել , և Մարգարէի
ու Պատմութեան էն մեծ խորհուրդներէն մին սկսի
մնայ ասիկա , թէ ինչու՞ այդ տիկինը փողոցին հա-
զարաւոր անցորդներուն մէջէն, յատկապէս Փ . . ին
արժանի գտաւ այդ հարցարանը : Փ . . ք ամեն
բանի երեւոյթը ունի, բայց ի պարկեշտ ու կրօնասէր
կաթիլիկի մը շնորհքէն : Լոնտոնի մէջ, անգլիացի-
ներու վրայ իր թուած ամենէն սովորական տպա-
ւորութիւնը՝ անշխմանական մը տպաւորութիւնն է :
Տղաքները արաստափահար կը փախին իր անցքին
վրայ , ու մեծերը զգուշութեամբ ճամբայ կը
բանան իրեն : Իսկ երբ բազմաթիւ են , կուսինին
կը ցուցնեն : Ասոր պատճառը զլսաւորապէս Փ . . ին
սեւ մազը ու սեւ մօրուքն են : Park manը այս-
տեղ, Ստամբուլն է կարծես , ու Անգլիացին, բրիտ-
տոնեայ ժողովուրդ, առիթը գտած աստեղը կը կոփէ
ու կը քարկոծէ զանիկա : Կը յիշես որ անցեալ
տարի անգլիացի լոնտոնէր ծեծի տակ մեռցուցին
խեղճ սեւաշեր հայ բանուոր մը որ ջարդերէն փախած
հասեկած էր, ու այս տարի փողոցի տղաքներ Չերազին
խեղճ եղբորդիին թիթը բերանը արիւնքուայ ըրին
ծեծի տակ , պարզապէս սեւ մազ ունենալուն հա-
մար : Doux peuple , իրաւ որ :

Դատնալով մեր հարցարանին, մեր խանդավա-
ռութեան վրայ չուտով պաղ ջուր իջաւ , անգամ
մը որ ուշի ուշով կարգացինք գրուածքը : Տարե հա-
զար տակին , անշուշտ , բացէ ի բաց խոստացուած
էր, ու ո՛չ ես ո՛չ Փ . . ք , Ս . Գրքին էջերուն վրայ
մազ ճերմկուցած ենք : Ու թեւերնիս կախ , իրարու
երես նայեցանք յուսահատութեամբ, զգալով մեր
մէջ թաւազըր տառապումը Յոյսին կանգնած դի-
թական մեծ չէրին : Ա՛հ, ձեռքին տակ ունենալ
Բաղլը, ու թողուլ որ փախի երթայ ան՝ արհա-
մարհոտ մեր ապիկարութեանը !

* * *

Ամեն բան գործ է այս բաղաբին, այս երկրին
մէջ, ամեն բան business : Օ՛հ , այս բառին մոգու-
կան ազդեցութիւնը անգլիացիներուն վրայ :

Անցեալները բարեկամի մը հետ ելանք գացինք
Kensal Greenի գերեզմանատունը, զոր «Պէտէքէր»
տեմնաւոր արժանի տեղ մը ցոյց տուած էր : Դանէն
ներս մտնելու, յանկարծ կանգ առի, ապշած : Պա-
տէն կախուած կանոնադրութեան տախտակին վե-
րեւը—«ձխելը արգիւտած է» , «ներելի չէ շուն
ներս մտնելը» և այլնի վրայ — խոշոր տառերով գըր-
ուած էր . . . չէ՛ , չի սկսի հաւատա . . . սեւ տախ-
տակին վրայ խոշոր ձեռնակ տառերով գրուած էր

The general Cemetery Company

ու տակը

All souls

Հասկցայ : Գերեզմանատունն ալ ընկերութիւն
մը կը բանեցնէր՝ թրամուէյի մը կամ կազմի պէս :
Եւ որովհետեւ, ըստ օրինի , ամեն «անանուն» ըն-
կերութիւն որոշ անուն մը ունենալու էր, իրեն ա-
նուն ընտրած էր Ալբուրք հոգիները : Տարին անգամ
մը բաժնետէրերու ընդհանուր ժողովքը կը գու-
մարուի, հաշիւները կը քննուին ու կը վաւերացուին,
վարչական խորհրդէն ելլող անգամներուն տեղ՝ նո-
րեր կընտրուին, շահաբաժինը կորոշուի, աւելցուի
պահեստի դրամագլխին կանցըուի, ու շնորհակալու-
թիւն կը քուէարկուի վարչական խորհրդին համար :
Ընկերութեան բաժնեկիցիները Պորտսի մէջ ցու-
ցակազմուած են, ու աւելորդ է ըսել որ համաձա-
րակի մը տունն կը բարձրանան, ինքնուրուշային ատեն,
չափ վրայ դրած էին, բայց հիմակ, շատ հանդարտ
կերթան, շատ գործ չըլլար կոր :

Այս ընկերութեան բաժնետէրերը մեծ մասամբ
թիշիկ ըլլալու են :

Ինծի հետ մէկտեղ՝ հիացիր ընկերութեան ա-
նունին վրայ : «Ալբուրք հոգիներ» : Սթանլիի ա-
նուն մը որուքն են իրենց : «Սինկլիի կարի մեքե-
նաները էն շատ տարածուածներն են», «Բիթսի
օճաւը էն շատ ծախուածն է» : Քլինտոն կրկին գե-
րեզմանատան գերեզմանին ալ «Ալբուրք հոգիներ»
ունի : Մեռելի վրայ էն շատ գործ ընող տունը
ան է :

* * *

Հուստիսէն կանցնէի , Horse-guardներու
զօրանոցին առջեւէն՝ ուր զինո՞ր կը գրեն , երբ
կանգ առի կարգաւոր պատէն կախուած յայտարա-
րութիւնը :

Չինուորութիւնն ալ business մըն է , մեծ bu-
siness մը :

Յայտարարութեան մէջ մէկիկ մէկիկ հաւուած
են՝ այն առաւելութիւնները որոնք վերապահուած
են զինուոր գրուողին : Օրակա՛ն , այսչափ շիւղի այս-
չափ ընտ : Այսչափ միս , այսչափ բանջարեղէն ,
այսչափ կարագ և այլն : Այլի վարմունք ունեցող
չինուորին՝ դրամական պարգեւ : Զօրանոցին մէջ
կարելի է սորվիլ արհեստ մը որով ետքէն փառաւ
կը վասկուի , money is made :

Կը մտածեմ թէ Փրանսացիները ինչպէ՞ս պիտի
խաղաղէին այսօրինակ յայտարարութիւն մը : Օգոս-
տոս իսկ պատմական իրիկունը Մարգարէի իրաւունք-
ներ հռչակող Փրանսացիները այսօր ալ կոչուած պիտի
ընէին միայն ու միայն սրտին . հայրենիքը , նախա-
կան հալը , նախահայրերու վառուտը յիշատակը ,
փառքի ժառանգութիւնը , Ֆրանսայի պատիւը ,
Փրանսական երակներու մէջ եւաղող արիւնը , մեծ
զոհողութիւնները ու դեռ ի՛նչ գիտնամ , էն փայլուն
ու էն կրակոտ խօսքերը իրար պիտի միանային Փրան-
սացի երիտասարդին աչքին դիմաց , յուզիչ ու շը-
լայնող :

Անգլիացին՝ ոսկին կը չողացնէ անոր աչքին
առաջ : Մարգարէին սիրաւ որչափ աղէկ ճանչնա-
լու է մարդ ու օրչափ արհամարհելու է մանաւանդ,
այս իմաստասիրութեան համեմու համար :

Ա՛լ վերջացնեմ , որովհետեւ եթէ Լոնտոնէն
կրած տպաւորութիւններս գրելու ելլեմ , վերջը
չի գար : Լ . Բ .

Կ. ՊՈԼՍԵՆ ԼՈՒՐԵՐ

Թայմզին թղթակիցը կը հեռագրէ Կ.
Պոլսէն թէ Օրմանեան Պատրիարքը գանդատ
յայտներ է պալատը՝ հայերու ձերբակալման
ու բանտարկութեան համար : Սուլթանը գու-
հունակութիւն յայտներ է եղեր որ ինդիւրը
համարձակ կերպով իրեն կընեկայացուի և խոս-
տացեր է լրջօրէն քննել և ուսումնասիրել զայն :

—Անցեալ կիրակի Կ. Պոլսոյ Հայոց եկե-
ղեցիներուն մէջ կարգացուեցին պատրիարքա-
կան չըջաբերական մը որ հաւատարմութեան
ու հանգարտութեան յորդորներ կը կարգայ
ժողովուրդին :

—Կը յիշուի թէ Պոլիս ալ ուղեց իր «Պա-
ղաւ տը Շառիթէ»ն ունենալ Բարիզի պէս .
հասցիքը պիտի յատկացուի պատերազմէն
զարձող հիւանդ զինուորներուն : Այդ տեղ
վաճառուելու համար զրկուած նուէրներուն
մէջ մասնաւորապէս կը յիշուին Գերմանիոյ
կայսեր իր ձեռքով չինած նկարները . Ֆրան-
սական Հանրապետութեան նախագահը և Պ.
Հանօթօ , ինչպէս նաեւ Աւստրիոյ կայսրը, ի-
րենք ալ ետ մնալ չեն ուղած՝ յոյները նուա-
ճելու զրկուած զօրաբանակին նկատմամբ անձ-
նապէս ալ համակրանք արտայայտել , և ար-
ժեքաւոր նիւթեր զրկած են «Պաղաւ»ին :

—Սրանհաւատի ուղղուած հեռագրի մը
նայելով , Սուլթանը կը փափագի փութացնել
կրէտական խնդրին լուծումը : Մեծ տէրու-
թիւնները յայտարարեցին թէ նոյնմբերին
կը կարգադրուի : Դուռը հարկ եղած հրա-
հանգները տուել է թուրքիւսական յոյներուն
կացութեան նկատմամբ , քանի որ այլ եւս
պատերազմական վիճակը դադարեցաւ :

—Գերմանական ընդհանուր հիւպատոսը,
որ արձակուրդով բացակայ կը գտնուէր , Կ.
Պոլիս վերադարձին՝ իր ստանը կողոպտուած
գտեր է :

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Trop de bruit pour rien . ' Ձեռք կրնար
զայել այս քաղաքանոթիւնը , երբ Կալիու-
պի ծակի խնդիրը հետեւեալ կերպով վեր-
ջացած կը տեսնենք :

Ռազմագիտական փորձերու միջոցին՝
Անգլիոյ Վեհափառ քաղաքացի զինուորնե-
րուն վրայ յարձակիչ, փարկոծել զանոնք , ցի-
րուցան ընել անբողջ այդ խուռքը , յանդգ-
նութիւն մըն էր որ շատ սուղի պէտք էր նըս-
տիչ իր հեղինակներուն :

Հակառակը պատահեցաւ :

Առջի օրերը շատ աղմուկ յարուցին այս
խնդրոյն շուրջը . յազարաթիւն անհազին կա-
րեւորութիւն ունեցող ճիւղ մը ձեռք անցը-
նել կարծեց , հարկէջ փաշան օրը տար ան-
գամ յատկ կառախումբ հանել կոտար եւ
յարասեւ շարժման մէջ կը գտնուէր , ֆննու-
թիւն՝ ֆննութեան կը յաջորդէր , ամեն օր
հարցաֆննութիւններ կը կատարուէին եւ ամ-
բողջ եգիպտոս այդ խնդրոյն ելլին կրպա-
սէր :

Վերջապէս երեկ իր նիստը ըրաւ արտա-
սովոր դատարանը որուն կը նախագահէր
Դատական նախարար Իպրահիմ փաշա Ֆու-
աս , միւս անդամներն էին , Պ . Բ . Բաւրքըն ,
ի դիմաց նոյն նախարարութեան խորհրդ-
ական Սըր Զօն Սփօքի , Պ . Ժ . Վիլմօր , մէյ-
ճըր Սաւաքն եւ Ահմէտ Ֆաթիի պէյ :

Տեղացիներու խոռոկ քաղաքիւն մը
միջազգային դատարանի շուրջը կը պֆսար՝
դատաւիճիչ շէշու համար :

Դատարանը դռնիակ կատարուեցաւ,
միայն մամուլի ներկայացուցիչները մոտք
ունէին սրահին մէջ :

Շատ մը վիճակներ շէշէ եւ երկու կողմի
փաստաբաններու պերճախօսութեանը ուն-
կեղեղէն ետք , դատարանը հետեւեալ վճիռը
արձակեց .

Ահմէտ Կալիպալ եւ Ապսալլահ Իշա եր-
կուքն ալ գործաւոր եւ որոնք առաջիններն
եղած էին յարձակողական այդ խաղիկն մէջ՝
դատապարտուեցան ուրանական ամիս տա-
նակիր աշխատութեան Սուսանի երկաթու-
ղիի գծին վրայ :

Երեք ուրիշ անքատարտութեան վեցա-
կան ամիս նոյն պատժէն եւ մնացեալ տաս-
նըհինգ հոգիները դատապարտուեցան . . .
յանդիւնանութեան :

Այս վճիռէն կենթադրուի թէ այդ մար-
դոց յանցանքը կարծաւոր չափ ծակի չէր,
այսպէս թէ ոչ այս անկող-եգիպտական արտա-
սովոր դատարանը քաղական չափի համա-
րէր տալ այն պատժը զոր Ամերիկայի մէջ
առանց օրիորդի մը հաւանութեան զայն
համարադրուի կոտան ընդհանրապէս :

Եթէ երբեք այդ անգլաւեցալ տեղացի-
ները նոր փորձ մը ընելու չեղնեն , տրուած
պատժէն ոչ ոք իրաւունք ունի զանգատելու :

Փաստաբան Տիար Յակոբ Ասատուրեան ար-
տօնուած է նաեւ փաստաբանել տեղական
բոլոր դատարաններու առջեւ , ինչպէս արդէն
արտօնուած էր խառն դատարաններու համար :

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

7

ՄԱՆԻՓԱՐՈՒԹՅՈՒՆ

Պոլսոյ մէջ մանիֆարուաի խոնարհ մը ունեւնալը Եւրոպայի մէջ զգեալի մը տէր ըլլալու կը նըմանի. ապրուստանութեան հովեր կուտայ մարդուն : Չաքմաքճըլարի բարձունց վրայ պէտքովն կ'ունենային քաղաքի տէրերը և մանածի վաճառակարները արդարապէս իշխան մը :

Եւ տարրեր կերպ չէր կրնար ըլլալ :

Մանիֆարութեաններէն կեղծն ըստգոյն փեւտները, փրկիչի հոգարարները, թաղականները, որբերու պաշտպանները և այլններու խնամակալները :

Այդ աղաները «մեր Մանիֆար»ը կ'ունեն երկու ձեւեր. մէկը վրայ կը խօսին, ճիշդ ինչպէս պիտի ըսէր կրտսերները «մեր Հաւատարմ»ը : Եւ յաջորդին անգլիացիի նմանեւ համար լիցիւններուն ներքոյն երեք մաստ հաստութեամբ շինել կուտան. անգլիացիին միակ cachetն քոր կրնան խրոյսնել . . . առ ի խընայողութիւն :

Մանիֆարութեաններէն չորս legende ունի. խորի պատերազմը, Գարակէօգեաններու Պարկաստանի հետ գործ ընելը, Միքայէլ Յակոբեանի Աւստիա երթալը, և կուտանի Համաձայնի պարբերական անանկութիւնները :

Կեսարացիները մեծ տեղ կը լռեն մանիֆարութեաններու աշխարհին մէջ, ինչպէս հրեայները լայն տեղ մը կը գրտեն արդի քաղաքականութեան մէջ :

Պարկասի ասպետներուն համար աշխարհիս վրայ իրենցմէ զատ մարդ չկայ : Իրենց համար փառաստանը շատութեան մըն է, բոլորէն իրարմէն մարդասպան մը, գրադէտը պօս ֆեթիմ մը, կառավարական պաշտօնեան հազար եօթիմ մը, ասկերիչը առաւ փախաւ մը, վարժապետը մուրացի մը, բահանան պէյա մը և գրադէտը գրեւ կարգաւ գիտցաւ պաշտիկ լէճիմէր-Մանիֆար :

Մանիֆարութեաններէն զորս չի փրկութիւն :

Ընդհանրապէս մաքուր կը հաղորին. Ալէմ-Տադի հովարսայութեան կերթան և երբեմն գրպանն նուն մէջ կը մոռնան . . . ազգին ստակը :

Խոնարհութիւն մէջ անանկ ըստ, անանկ խորհրդաւոր դէպք մը կ'ունեն որ կարծես երկու պետութեանց միջեւ առեւտրական դաշնագիր մը պատրաստելու վրայ են :

Եւ հաւատացէք որ այդ վայրկեանին զիջեալուստ ուտելիքներու վրայ կը մտածեն :

—Եֆէնտիմ, աս աշխարհիս վրայ անգլիներէն զիտուու է, կըսեն, և իրենց գիտցածը վեց բառէն անգլի չանցիր : Մանիֆար, ինչեզ, բեյս մարք, Բարպանի, մասամբօլ և եւրաս : Ժամացոյցնին և անգլիներն Անգլիայէն կուգայ :

Ճամբան քաղաք առեւտրին կը կարծեն թէ մէյ մէկ ֆապրիքաթօրներ են, հետեւաբար շտապած, լայն և հաստատ քայլեր կ'առնեն :

Հրապարակին վրայ որքան քով նետեն՝ մաղապայն քովերը այնքան կ'առնեն և զիտուած է որ մանիֆարութեան անանկութիւնը ճիշդ կ'ունեն ծննդաբերութեան օրերուն կը հանդիսի, ամեն բան հաշուով կ'ունեն, խելքի այդ սարքիները :

Եւ երբ Մանիֆարի մէջ ալ մանիֆար մը կը հաստատեն, սովորական մահաւանջութիւն կը դադարին և միշտ յորտ կ'ըլլան : Չաքմաքճըլարի մանիֆարութեանները և այնպէս կը պարծենան իրենց խելքին վրայ որքան չէ հարստացած Եսիւսըն իր հանճարին և Նարոզէն իր տաղանդին վրայ :

ՌԱՏԱՄԵՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Հիշենական խորհրդարանը որ երկուշաբթի պիտի գումարուէ՝ պատերազմական սուգանքի վճարման յատկացուելիք հասոյթները որոշելու համար, իր նիստը վաղը ևս յետաձգեց : Աթէնքի ռուսական դեսպան Պ. Օնու, իբրեւ իր պաշտօնակիցներուն երկցա-

գոյնը, արտաքին գործոց նախարար Պ. Աբուլուտիսի յանձնելով հաշտութեան պայմանագրին վաւերական օրինակը, յայտարարեց թէ Տէրութիւնք վերջացած կը նկատեն իրենց իրաւարարութիւնը և կը հրաւիրեն հելլեն կառավարութիւնը իր պատուիրակները կարգել՝ հաշտութեան վերջնական պայմաններուն վրայ բանակցելու համար :

Յունաստանի մէջ, առաջին վայրկեանի յուշումը կը հանգարարի. Ժողովուրդը կըմըռնէ թէ պարտի ընդունիլ հաշտութեան պայմանները, որ սակայն ծանր են :

—Վիեննայէ կը հեռագրեն թէ Աստրիոյ նախարարապետ Պատէնի կ'ունեն մենամարտելով երեսփոխանի մը հետ՝ ձեռքէն վերաւորուելու է : Յեղային վէճերը վերջին ասանկները շատ աստուկացած են Աստրիոյ խորհրդարանական շրջանակներուն մէջ, մանաւորապէս գերմանասէր և չեհ երեսփոխաններուն միջեւ : Պատէնի կ'ունեն մենամարտը այս գրգռուին արդիւնքն էր : Վէրը վտանգաւոր չէ :

—Հնդկաստանի ապստամբութեան նկատմամբ Պոմպէյէն առնուած նորագոյն հեռագիրներուն նայելով, Սվաթիա կոչուած ցեղը հնազանդութիւն յայտնեց է. Հատուա Մօլլայի գունդերը անկարգ անկանոն վիճակի մէջ են. անգլիացի Ուէսթմարթ զօրաւարին ջոկատը քայքայեց է այդ ապստամբ ցեղապետին բանակետը : Սիմլայէն ալ կը հեռագրեն թէ երկու օրուան զինադադար մը կ'ընեն Բանժօրա գաւառի ցեղերուն հետ, այս վերջիններուն հնազանդութեան պայմանները քննելու համար :

—Թայմը եւրոպական դաշնակցութեանց վրայ խօսած պահուն, Անգլիոյ մասին հետեւեալը կը յաւելու,

«Անգլիան երբեք չի կրնար փափագիլ եւրոպական որեւէ պետութեան հետ դաշնակցութիւն մը կ'ընել, ի բաց առեալ պատերազմի պարագային : Միշտ լաւ յարաբերութիւններ ունեցած ենք թէ Ֆրանսայի և թէ Ռուսիոյ հետ նոյն իսկ ասոնց դաշնակցութեան հետ և պատճառ մը չի կայ որ այժմ իրացայս վիճակը փոխելով մեր բարեկամական կապերը խզենք : Բէզարպուրի «Նուլօ Թան» լրագիրը կը կարծէ թէ Ֆրանսա և Ռուսիա Անգլիոյ միանալով բան մը չեն կորսնցունել իրենց Ափրիկէի և Ասիոյ մէջ ունեցած շահերէն. սեղն է յիշեցնել մեր գերման մենտորներուն թէ նոյն ինքն Նիքօլա կայսրը միեւնոյն կարծիքը ունի Ռուսիոյ և Անգլիոյ միացման վրայ, բան մը որուն շատ համակիրներ կան Անգլիոյ մէջ» :

—Իտալիա իր նաւատորմիդը աւելի զօրացնելու համար չորս մեծ զրահաւորներու և խել մը թօրփիլանաւերու շինութեան ձեռնարկած է :

ՏԵՂԱԿԱՆ

Սիամի թագաւորը, ի դարձին Եւրոպայէ, Եգիպտոս պիտի այցելէ նոյնմբերի սկիզբը և Բարձր. Խորվին հիւր պիտի ըլլայ :

Ապտինի պալատին մէջ պատրաստութիւններ կը տեսնուին, Ն. Վ. Շուկայովեքօնի ընդունելութեան համար :

—Պ. Կրիբարիս, Յունաստանի դիւանագիտական գործակաւորը այսօր վաղը Գահիրէ կը սպասուի Լորտ Բրոմբրի հետ բանակցելու համար հելլենական հպատակներուն յատուկ կարգ մը խնդրոյ և մանաւորապէս օգոստոսի 31ի դէպքերուն վրայ :

—Վատի-Հալֆայի մէջ տիրող ծաղկի հիւանդութիւնը բոլորովին անհետացած ըլլալով, առողջապահական հսկողութիւնը վերցուած է :

—Աղեքսանդրիոյ մէջ այս պահուս ինֆլուէնձան շատ տարածուած է. թէեւ թեթեւ տեսակէն, բայց բռնուողը դատապարտուած կըլլայ քանի մը օր անկողին մնալու :

—Սուաքինէ առնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ տեղոյն վաճառականները արտօնութիւն ստացած են Պէրպէրի հետ իրենց յարաբերութիւնները վերահաստատելու :

—Շաբաթ օր տեղի ունեցաւ Էջ-Մուշիւրի խմբագիր Պ. Սարգիսի հարմանխօսութիւնը, օրորող Պահկաթ Հուսսիի հետ :

Մեր շնորհաւորութիւնները :

—«Էլ-Մուգաթթամ» կը հալոյդէ թէ Եգիպտոսի դատական նախարարը գրաստան պէս ծանուցած է Գահիրէի խառն դատարանի նախագահ Լաթիֆ Սէլիմ պէյի թէ յիշեալ դատարանի անդամը ըստ օրինի չեն կրնար որեւէ տիրոջ կամ ստատիճան ընդունիլ և թէ հետեւաբար պարտաւոր է կամ մերժել Միմիլանի (փաշայութեան) աստիճանը զոր Սուլթանը տուաւ իրեն վերջերս և կամ հրաժարիլ իր պաշտօնէն : Արար թերթը կաւելցունէ թէ Լաթիֆ պէյ գիւր մը ուղղելով Կ. Պոլիս հրաժարեց իրեն ընծայուած պատիւէն :

—Ուրբան որ Բարձր. Խորվի կ'ըզօր ըրէնս Մուհամմէտ Ալիի համար ըսուած էր թէ եւրէկ Աղեքսանդրիա պիտի հասնէր, սակայն անանկալ պատճառով մը չէ կըրցած ճամբայ ելլել Մարսիլիայէն :

—Բաղաքիս ծանօթ փառաբաններէն Պ. Թիթօ Ֆիկաուի, Իտալիոյ Բօրթիչի քաղաքին մէջ երէկ մեռած ըլլալը հեռագրով ծանուցուած է իր ազգականներուն և Իտալիոյ հիւպատոսարանին :

Ի նշան սգոյ, Էդպէրիէի պարտէզի իտալական թատերական խումբը այս գիշեր ներկայացում չի պիտի տայ :

—Ինչպէս արդէն ծանուցուած էր, Լորտ Բրոմբրի վաղը առաւօտ Աղեքսանդրիա պիտի երթայ Բարձր. Խորվին ներկայանալու համար : Ընդունելութիւնը Բաս-Էլ-Թիւի պալատին մէջ պիտի կատարուի :

—Անգլիացի վեց ուսուցիչները որ պետական վարժարաններու մէջ պիտի պաշտօնավարեն, առաջիկայ շաբաթուս սկիզբը Գահիրէ կը հասնին :

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲԱՐԻՉ, 28 Սեպտեմբեր. — Նախարարաց խորհուրդին որոշմամբ Պ. Լօզէ՝ Ալէքիոյ ընդհանուր կառավարիչ, Պ. Ժ. Քանպօն՝ Վալիկթօնի դեսպան, Տէ Ռեվէրսօ մարքիզը Վիեննայի դեսպան, և Պ. Բաթլընօր Մարտիսի դեսպան անուանեցան :

ՊԵՐԼԻՆ, 28 Սեպտեմբեր. — Կազէք օր լ'Ալբ մաներ օր Նօն Եգիպտոսի ընդհանուր հիւպատոսի պաշտօնին յարմար կը գտնէ զօրոն Միւլէր՝ խորհրդական Բարիգի դեսպանատան :

Ս Ե Ղ Մ Ի Ր Ա Ն Ը

Առողջապահները և բժիշկները ուղածնուն չափ թույ հակառակին. սեղմիրանը, (foruէն) պիտի թաղաւորէ կիններու աշխարհին մէջ, միայն Բօրթուկալի մէջ է որ կուրծքի այդ բանտին դէմ — խեղճ բանտարկեալներ — պայքար մը կը մղուի և հաւանական է որ քիչ ատենէն Բօրթուկալի կինները դադարին զայն գործածելէ:

Օրինակը վերէն կուգայ. քորսէի ամենէն մեծ թշնամին Բօրթուկալի թագուհին է:

Շնորհափայլ վեհապետուհին, որ գիտութեանց սիրահար մըն է, շատ հետաքրքրուած է X ճառագայթներու գիւտին և անով կը զբաղի ժամանակէ մը ի վեր. հետեւաբար իր փորձերը կընէ շուրջը գտնուած պալատական կիներուն վրայ:

Իր մասնաւոր զբաղմունքը ըրած է X ճառագայթներով լուսանկարել անոնց մարմնոյն գլխաւոր մասերը:

Իր բազմաթիւ փորձերուն մէջ միշտ գիտուած է որ այդ կանացի կուրծքերը բացարձակ կերպով տձեւ պատկերներ կը ներկայացնէին, այնպէս որ X ճառագայթներուն տակ իննոյ կինները կամջնային այգալիսի ու զօրմեղի իրաններ ունենալուն:

Այս աւերումը քորսէին գործն էր, ուստի այդ պալատական կինները ամենքը միասին ուխտեցին մէկ կողմ դնել սեղմիրանին գործածութիւնը:

Եւ հաւատացէք որ այսպէսով բան մը չի կորսնցուցին իրենց գեղեցկութենէն և կամ շնորհէն:

Այդ պալենայէ մեքենային գործածութիւնը որ իր մատուցած շատ չնչին ծառայութեան փոխարէն՝ այնքան աղետաբեր դեր մը կը խաղայ կիններու կեանքին մէջ, կառավարական հրամանով արգիւրուած է Գալիֆօրնիոյ պետական գաղտնիներու աշակերտուհիներուն:

Սեղմիրանը այն է կիններու համար ինչ որ է ծխախոտը էրիկ մարդոց: Վայրկենական հաճոյքի մը փոխարէն՝ կեանքը կարճեցնելէ զատ ուրիշ նպատակ չունին երկուքն ալ:

Սակայն ծխախոտը սա առաւելութիւնը ունի որ զայն գործածողը իր անձնական հաճոյքին համար այդ թոյնը կը ծխէ, մինչ սեղմիրան հազնոյ կինը չի կրնար միեւնոյն բանն ըսել:

Տ Պ Ա Ր Ա Ն

“ՓԱՐՈՍ, ԼՐԱԳՐԻ

Կ Ը Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Ի Ն

ԱՄԵՆ ԼԵՁՈՒԻ ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԴ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՅԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԻ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եզրկտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութով կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցաբարձերու եւ տոմարներու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ օգոստոսի, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

Le Gérant: HENRY SAKAKINI

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԱԼԵԲՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՄԱԶՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթուղթերու. — Կանխավճար արժեթուղթերու վրայ. — Կտանձնէ յաճախողներու հաշւոյն համար դանձումներ ընել Եզրկտոսի և արտասահմանի գլխաւոր քաղաքներու մէջ. — Պայմանաժամաւոր վաճառում ամեն տեսակ պարզեւաւոր արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Պորթ փողոց Եզրկտոսի հետադրատան դէմ Բէսմազօղլու գրաստանը:

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօղպէքիյէ, հայկական պանդոկին քովընտի կամարակալ փողոցը բացած խանութին մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու եղանակաւ կ'արդուէ շապիկներ հայն սովորական գիններով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՋՍԱՆԳՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպիւս 1 2 3 կարգ	
Գաւիթ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	ժամ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» 3 10	երեկոյ 7 34	9 41	երեկ. 12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Ա. շէ բսանդուր	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	երեկոյ 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՋՍԱՆԳՐԻՈՅԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Օմնիպիւս 1 2 3 կարգ	
Ա. շէ բսանդուր	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	երեկ. 12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանթա	ժամ. —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գաւիթ	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ			ԿԱՅԱՐԱՆՔ		
ԳԱՀԻՐԷ	ԱՌԱՒՕՏ	ԵՐԵԿՈՅ	ՍԻԻԷԶ (քարափ)	ԱՌԱՒՕՏ	ԵՐԵԿՈՅ
Գաւիթ	մեկ. 11 40	7 —	» կայարան	» —	3 30
Պէնհա	ժամ. 12 28	7 48	Խանդիւ	երեկոյ 1 20	7 5
	մեկ. 12 33	7 53			
Զակաղիկ	ժամ. 1 34	8 54	Զակաղիկ	ժամ. 3 7	8 53
	մեկ. 1 44	9 4			
Խամալիւս	մեկ. 3 40	1 —	»	մեկ. 3 17	9 3
Սիւլզ կայարան	ժամ. —	5 —	Պէնհա	ժամ. 4 13	9 47
				մեկ. 4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ. 6 55	—	Գաւիթ	ժամ. 5 5	10 35